ՆԱՏՐԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ
տեղային կիրառման լուծույթ ականաբուժության և քիթ-կոկորդ-ականջաբուժության մեջ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Առևտրային անվանումը՝ Նատրիումի քլորիդ
Միջազգային չպատենտավորված անվանումը՝ Sodium chloride
Դեղաձևը՝ տեղային կիրառման լուծույթ 5 %
Բաղադրությունը
Ակտիվ նյութ՝ նատրիումի քլորիդ 50 մգ, *օժանդակ նյութեր՝* բորաթթու, նատրիումի տետրաբորատ $10H_2O$, հիպրոմելոզ, պրոպիլենգլիկոլ, մեթիլպարաբեն, պրոպիլպարաբեն, ներարկման ջուր մինչև 1 մլ:
Նկարագիրը՝ թափանցիկ, անգույն կամ քիչ դեղնավուն հեղուկ:
Դեղաբուժական խումբը
Ձգայական օրգաններ. Աչքի հիվանդությունների բուժման այլ պրեպարատներ. Նատրիումի քլորիդի հիպերտոնիկ լուծույթ:
ԱԲՔ ծածկագիրը՝ S01XA03
Դեղաբանական ազդեցությունը
Նատրիումի քլորիդը պլազմային փոխարինող, թունազերծող, հիդրատացնող և թթվահիմնային հաշվեկշիռը կարգավորող միջոց է:
Ականաբուժության մեջ ակնակաթիլների ձևով տեղային կիրառման ժամանակ ապահովում է այտուցամարող ազդեցություն:
Ներքթային կիրառման դեպքում հեռացնում է ալերգեններն ու ախտածին մանրէները. քթուղիները խցանող ու շնչառությունը դժվարացնող ավելցուկային լորձը, կեղևները, փոշին ու մանր մասնիկները, վիրահատությունից հետո վերացնում է թեփուկներն ու կեղևները՝ առանց արյունահոսության վտանգի, բարձրացնում է տեղային կիրառման դեղերի արդյունավետությունը, կարգավորում քթախոռոչի մեջ լորձագոյացումը:
Կիրառման ցուցումները
Ակնակաթիլներ
· եղջերաթաղանթի այտուց
Ներքթային կիրառում
· որպես քթի խոռոչը լվանալու հիգիենիկ միջոց,
· քթաբորբ, ռինոսինուսիտ, ռինոֆարինգիտ,
· հարքթային խոռոչների բորբոքումների կանխարգելում (հայմորիտ, ֆրոնտիտ, սինուսիտ),
· քթի խոռոչի մեջ այլ դեղերի կաթեցումից առաջ՝ դրանց ներծծումը բարելավելու նպատակով:
Կիրառման ձևերն ու դեղաչափերը
Ակնակաթիլներ. մեծահասակներին՝ օրը 3-4 անգամ, 1-2 կաթիլ:
Ներքթային կիրառում. քթի խոռոչը լվանալու համար, կիրառում են մաքուր ձևով կամ ներարկման ջրով կամ եռացրած ու սառեցրած ջրով նոսրացրած ձևով: Նոսրացման համար դեղի մեկ մասը լուծում են 1-4 մաս ջրում: 2 տարեկանից մեծ երեխաներին և մեծահասակներին՝ յուրաքանչյուր քթանցքի մեջ՝ ամեն օր 2-4 անգամ:
Հակացուցումները
Գերզգայունություն դեղի բաղադրիչների նկատմամբ.
Կողմնակի ազդեցությունները
Ականաբուժության մեջ կիրառելիս՝ հնարավոր է աչքերի այրոցի

անցողիկ զգացում, աչքերի կարմրություն և գրգռվածություն:
Ներքթային կիրառման ժամանակ հնարավոր է ալերգային ռեակցիաների զարգացում՝ եղնջացան, դժվարացած շնչառություն, բերանի, դեմքի այտուց:

Գերդեղաչափումը

Կողմնակի ազդեցությունների արտահայտված ախտանշաններ:

Հատուկ հրահանգները

Եթե դեղի կիրառումից 72 ժամ անց չի նկատվում վիճակի լավացում կամ վիճակը վատանում է, ինչպես նաև, եթե առկա են ցավ աչքերում, տեսողության խանգարում, աչքերի կարմրություն և գրգռվածություն, անհրաժեշտ է դադարեցնել դեղի կիրառումը և դիմել բժշկին:
Չի թույլատրվում կիրառել էլեկտրավիրաբուժական միջամտությունների ժամանակ:
Չի թույլատրվում կիրառել միևնույն սրվակը միաժամանակ և քթի, և աչքերի մեջ կաթեցնելու համար:

Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում

Դեղը զգուշությամբ օգտագործել հղիության և կրծքով կերակրման ընթացքում:

Ազդեցությունը ավտոմեքենա վարելու և մեխանիզմներ կառավարելու ունակության վրա

Ակնաբուժության մեջ կիրառելիս.
Այն հիվանդները, որոնց տեսողությունը դեղադրումից հետո ժամանակավորապես կորցնում է հստակությունը, պետք է խուսափեն ավտոմեքենա վարելուց, տեսողության հստակություն պահանջող մեխանիզմներ կառավարելուց, բարդ տեխնիկայով ու հաստոցների վրա աշխատելուց:

Փոխազդեցությունն այլ դեղերի հետ

Հատուկ հետազոտություններ տվյալ դեղաձևի համար չեն իրականացվել:

Պահման պայմանները

Պահել ոչ ավել 25 $^{\circ}$C ջերմաստիճանի պայմաններում, երեխաներին անհասանելի տեղում:

Պիտանիության ժամկետը

3 տարի: Չկիրառել փաթեթի վրա նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Սրվակը բացելուց հետո պարունակությունը կիրառել մեկ ամսվա ընթացքում:

Թողարկման ձևը

Պոլիէթիլենից 10 մլ-ոց սրվակ կաթոցիկ:
- Յուրաքանչյուր սրվակը՝ դեղի կիրառման հրահանգի հետ միասին՝ անհատական տուփում:
  10-ական տուփ՝ ստվարաթղթե բլոկում
- 10-ական սրվակ՝ կիրառման հրահանգի հետ միասին՝ ստվարաթղթե բլոկում:

Դեղատնից բացթողման կարգը

Առանց դեղատոմսի:

Արտադրող՝

LIQVOR®
pharmaceuticals

«Լիկվոր» ՓԲԸ, ՀՀ
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ (37460) 378800
E-mail: info@liqvor.com